ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

3 հունիսի 2024թ. թիվ 486

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ, Դ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ, Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ, Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ, Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ, Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ, Ա.ԱԴԼՈՅԱՆԻՆ, Ս.ՄԱԿԱՐՅԱՆԻՆ, Ռ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ, Գ.ՔԱՐՀԱՆՅԱՆԻՆ, Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԵՎ Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Գ.Մելիքսեթյանի 03.06.2024թ. զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Ղարսայանին, Վահրամ Դանիելյանին, Դավիթ Մանուչարյանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին և նույն վարչության գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Սամվել Մակարյանին և նույն վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Արտաշես Ադլոյանին, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին և գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարեգին Քարհանյանին, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին,ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյանին և զարգացման

ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանին ս/թ հունիսի 3-ին մեկ օրով գործուղել ք.Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակի կառավարման որոշ աշխատանքների իրականացման և համակարգման համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

03/06/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. հունիսի 3
ք.Վանաձոր